ՀԱՅԿԱԿԱՆ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏԸ

Նախահեղափոխական Հայաստանում չկար ոչ մի ուսումնական հաստատություն մասնագետներ, այդ թվում և գյուղատնտեսության մասնագետներ պատրաստելու համար։ Այդ էր պատճառը, որ մինչև Սովետական իշխանության հաստատվելը Հայաստանում աշխատում էին միայն մի բանի գյուղատնտեսներ, իսկ գյուղատնտեսության մեքենայացման և ոռոգման գծով մասնագետներ չկային։

Հայաստանում Սովետական իշխանություն հաստատվելուց հետո ժողովրդական տնտեսության համար որակյալ մասնագետներ պատրաստելու նպատակով հիմնվեց Երևանի Պետական համալսարանը։ 1921 թ. համալսարանին կից կազմակերպվեց նաև գյուղատնտեսական ֆակուլտետը։

1930 թ. գյուղատնտեսական ֆակուլտետը Պետական համալսարանից անջատվեց և այդ ֆակուլտետի բազայի վրա կազմակերպվեց ինքնուրույն Գյուղատնտեսական ինստիտուտ։ Նորաստեղծ ինստիտուտը իր կազմում ուներ երկու ֆակուլտետ՝ ագրոնոմիական և այգեպտղաբուծական։ Գյուղատնտեսական ֆակուլտետի առաջին ուսումնական տարում սովորում էին 122 ուսանողներ։ Ինստիտուտը գրաղեցնում էր միայն մի փոքր շենք, որն այժմ վերածվել է ուսանողական հանրակացարանի։

Ինստիտուտի կազմակերպման, ամբիոնները ստեղծելու և դասախոսական կադրեր պատրաստելու գործում մեծ ծառայություններ ունեն ինստիտուտի առաջին դասախոսները՝ պրոֆ. Հ. Երիցյանը, պրոֆ. Ա. Թամամյանը, պրոֆ. Պ. Քալանթարյանը, պրոֆ. Ա. Տեր-Պողոսյանը, պրոֆ. Ն. Տրոիցկին, պրոֆ. Մ. Թումանյանը, պրոֆ. Գ. Աղաջանյանը, պրոֆ. Գ. Գրձելյանը, պրոֆ. Ս. Արովյանը, պրոֆ. Բ. Գալստյանը, պրոֆ. Հ. Բեղելյանը և ուրիշներ։

Սոցիալիստական գյուղատնտեսությանը ավելի շատ մասնագետներ տալու համար Գյուղատնտեսական ինստիտուտը հետագայում զգալիորեն ընդարձակվեց։ Հայրենական Մեծ պատերազմի տարիներին կազմակերպվեցին պտղաբանջարաբուծական և գյուղատնտեսության մեքենայացման ֆակուլտետները (1944)։ Մեր ռեսպուբլիկայի համար կենսական նշանակություն ունի ոռոգվող տարածությունների ընդարձակումը։ Այս խնդրի հաջող լուծման համար պահանջվում էին բարձրորակ մասնագետներ։ Բարձրագույն կրթությամբ խորհրդատորներ պատրաստելու գործին խիստ նպաստեց 1951 թ. կազմակերպված հիդրոմելիորացիայի ֆակուլտետը։

Նկատելով գյուղատնտեսության արտադրության պահանջներից, Գյուղատնտեսական ինստիտուտը տարբեր ժամանակաշրջաններում բազմաթիվ կադրեր է պատրաստել նաև այլ մասնագիտությունների գծով։ Այսպես, 1945 թ. մինչև 1950 թ. այգեգործական ֆակուլտետին կից գործում էր ինժեներ-գինեգործների պատրաստման բաժին, իսկ պտղաբանջարաբուծական ֆակուլտետին կից՝ ինժեներ-պահածոյագործների պատրաստման բաժին։ Հիդրոմելիորացիայի ֆակուլտետին կից կազմակերպվեց ավտոմելիորացիայի բաժին։

Գյուղատնտեսական ինստիտուտի շրջանավարտներից շատերը աշխատում են մեր ռեսպուբլիկայից դուրս։ Դրան մեծ չափով նպաստում է 1954 թ. կազմակերպված ուսական սեկտորի ստեղծումը՝ գյուղատնտեսության մեքենայացման ֆակուլտետում։

Ռեսպուբլիկայի գյուղատնտեսության զարգացման և գյուղատնտեսությունը գիտականորեն վարելու համար մեծ անելիքներ ունեն տնտեսագետ ագրոնոմները։ Հաշվի առնելով գյուղատնտեսական արտադրության պահանջները, այգեպտղաբանջարաբուծական ֆակուլտետին կից 1959 թ. ստեղծվեց գյուղատնտեսության էկոնոմիկայի բաժին։

Զգալիորեն մեծացել է նաև գյուղատնտեսության մեքենայացման ֆակուլտետը։ Այդ ֆակուլտետին կից 1959 թ. կազմակերպվեց ավտոտրակտորի շահագործման բաժին։

Ռեսպուբլիկայի գյուղատնտեսության առաջադրված խնդիրները հաջողությամբ կատարելու համար բարձրորակ գյուղատնտեսական մասնագետների պահանջը ավելի ու ավելի մեծանում էր։ Բացի այդ, գյուղատնտեսական արտադրության, պարտիական ու սովետական օրգանների շատ աշխատողներ ցանկանում էին գյուղատնտեսական բարձրագույն կրթություն ստանալ առանց արտադրությունից կտրվելու։ Այդ խնդիրը լուծելու համար Հայկական Գյուղատնտեսական ինստիտուտում 1950 թ. կազմակերպվեց հեռակա ուսուցման ֆակուլտետ, սկզբում ագրոնոմիական ու այգեպտղաբանջարաբուծական, իսկ հետագայում նաև գյուղատնտեսության մեքենայացման և գյուղատնտեսության էկոնոմիկայի մասնագիտությունների գծով։

Նոր ֆակուլտետների կազմակերպման հետ միասին արագորեն աճեց ինստիտուտում սովո-



Ինստիտուտի գլխավոր մուտքը

դող ուսանողների թիվը։ Նախկին փոքրիկ ինստիտուտը ներկայումս վեր է ածվել գյուղատնտեսական կադրերի պատրաստման խոշոր դարբնոցի։ Գյուղատնտեսական ինստիտուտի բոլոր ֆակուլտետներում այժմ սովորում են 2931 ուսանողներ։ Ըստ ֆակուլտետների ուսանողների կազմը հետևյալ պատկերն ունի։ Ագրոնոմիական ֆակուլտետում սովորում են 247, այգեպտղաբանջարաբուծական ֆակուլտետում՝ 227, այդ թվում գյուղատնտեսության էկոնոմիկայի բաժնում՝ 54 ուսանող։ Գյուղատնտեսության մեքենայացման ֆակուլտետում սովորում են 441 ուսանողներ, այդ թվում հիդրոմելիորացիայի բաժնում՝ 28 և ավտոտրանսպորտի շահագործման բաժնում՝ 74 հոգի։ Հեռակա ֆակուլտետում բոլոր մասնագիտությունների գծով առանց արտադրությունից կտրվելու սովորում են 2016 մարդ։

Ուրախալի է, որ Գյուղատնտեսական ինստիտուտի ուսանողները ապրում են ինտերնացիոնալ կյանքով։ Հայերի հետ միասին միևնույն լսարանում նստած են ասաններ, ուկրաինացիներ, բելոռուսներ, վրացիներ, ադրբեջանցիներ, քրդեր և կորեացիներ։ Մի քանի տարի առաջ Դաղստանի պարտիական ու սովետական զեկավար օրգանները դիմեցին մեր ռեսպուբլիկային՝ գյուղատնտեսության մասնագետների պատրաստման գործում իրենց օգնելու համար։ Այդ պատվավոր խնդիրը հանձնարարվեց Գյուղատնտեսական ինստիտուտին։ Դաղստանից եկած բազմաթիվ երիտասարդներ մեր ինստիտուտի դասախոսների զեկավարությամբ ստանալով ինժեներ-մեխանիկի կվալիֆիկացիա, մեկնեցին հայրենի շրջանները։

1921 թ. մինչև 1930 թ. ընկած ժամանակաշրջանում Երևանի Պետական համալսարանի գյուղատնտեսական ֆակուլտետը ավարտել է ընդամենը 289 մասնագետ, Գյուղատնտեսական ինստիտուտը իր գոյության 30 տարվա ընթացքում տվել է 4330 շրջանավարտներ։ Ինստիտուտը կազմակերպվելուց հետո 1931 թ. մինչև 1939 թ. ընկած ժամանակաշրջանում ինստիտուտի տարբեր ֆակուլտետները ավարտել են 553 մարդ։ Ինստիտուտի շրջանավարտների

Թիվը տարեցտարի ավելացավ։ Այսպես, 1947 թ. մինչև 1950 թ. ինստիտուտն ավարտել են 682, 1952 թ. մինչև 1957 թ.՝ 1816 և 1958 թ. մինչև 1961 թ. ընկած ժամանակաշրջանում՝ 979 մարդ։ 1956 թ. մինչև 1961 թ. ինստիտուտի հեռակա ֆակուլտետը ավարտել են 386 մարդ։ Ինստիտուտի գոյության ընթացքում շրջանավարտների թիվն ըստ մասնագիտությունների հետևյալն է. ագրոնոմներ՝ 1490, այգեգործ, պտղաբույծ-բանջարաբույծ և ինժեներ-տեխնոլոգներ՝ 1480, ինժեներ-մեխանիկներ՝ 935, հիդրոմելիորատորներ՝ 425 հոգի։

Ինստիտուտն ավարտած մասնագետների մեծ մասը ներկայումս աշխատում է գյուղատնտեսության արտադրության մեջ՝ կոլտնտեսություններում և սովխոզներում, գիտա-հետազոտական և ուսումնական հիմնարկներում, պարտիական ու սովետական օրգաններում։ Գյուղինստիտուտի շրջանավարտներին կարելի է հանդիպել մեր երկրի ամենատարբեր վայրերում՝ օգտակար և պատասխանատու պաշտոններում։

Գյուղատնտեսական ինստիտուտի շատ սաներ այժմ կոլտնտեսային և սովխոզային արտադրության ղեկավարներ են։ Ռեսպուբլիկայի աշխատավորները լավ են ճանաչում առաջավոր կոլտնտեսությունների նախագահներ, ինստիտուտի սաներ, ՍՄԿՊ XXII համագումարի պատգամավորներ Պ. Պետրոսյանին, Ն. Մարդարյանին, Բ. Կարախանյանին և շատ ուրիշների։

Ինստիտուտի սաներից շատերը պարտիական ու սովետական ղեկավար աշխատողներ են։ Այսպես. Հոկտեմբերյանի շրջկոմի առաջին քարտուղար Կ. Քոչարյանը, Մարտունու շրջկոմի առաջին քարտուղար Ց. Խաչատրյանը, Վեդու շրջկոմի առաջին քարտուղար Ռ. Խաչատրյանը Գյուղինստիտուտի շրջանավարտներ են։

Ինստիտուտի սաներից շատերը այժմ գլխավորում են գիտա-հետազոտական հիմնարկներ, բաժիններ ու ամբիոններ։

Իրենց անձնուրաց աշխատանքի համար ինստիտուտի սաներից շատերը արժանացել են կառավարական բարձր կոչումների և պարգևների։ Ինստիտուտի նախկին սան Միքայել Դյուլխասյանը ինստիտուտն ավարտելուց անմիջապես հետո մեկնեց կոլտնտեսություն։ Նրա անմիջական ղեկավարությամբ զգալի հաջողությունների հասան Եղեգնաձորի շրջանի Արևնի գյուղի ծխախոտագործները։ Բարձր գնահատելով նրա քրտնաջան աշխատանքը, Սովետական Միության Գերագույն Սովետի Նախագահությունը Մ. Դյուլխասյանին շնորհեց Սոցիալիստական Աշխատանքի Հերոսի կոչում։ Նա այժմ գյուղատնտեսական գիտությունների թեկնածու է և աշխատում է ինստիտուտի բուսաբուծության ամբիոնում որպես դոցենտ։

Հայկական ՍՍՌ Գերագույն Սովետի Նախագահությունը կոլտնտեսություններում ու սովխոզներում, գյուղատնտեսության ղեկավար օրգաններում աշխատող մի խումբ գյուղատնտեսների շնորհել է վաստակավոր ագրոնոմի պատվավոր կոչում։

Սոցիալիստական դաշտերի փառաբանված շատ վարպետներ Գյուղատնտեսական ինստիտուտ են ընդունվել իրենց փորձը հարստացնելու և գիտելիքները ավելացնելու համար։ Գյուղատնտեսական ինստիտուտում սովորել են սոցիալիստական աշխատանքի հերոսներ Մ. Մարտիրոսյանը, Հ. Քոլոզյանը, Մ. Գևորգյանը, Ռ. Մանուկյանը, Հ. Խաչատրյանը, Վ. Զաքարյանը, Հ. Զաքոյանը, Հ. Դավթյանը, որոնք ներկայումս ռեսպուբլիկայի կոլտնտեսություններում ու սովխոզներում աշխատում են որպես մասնագետներ։

Գյուղատնտեսական ինստիտուտն են ավարտել Սովետական Միության հերոսներ Հ. Մկրտչյանը և Խ. Խաչատրյանը։ Հ. Մկրտչյանն այժմ աշխատում է գյուղատնտեսական արտադրության մեջ որպես ինժեներ-մեխանիկ, իսկ Խ. Խաչատրյանը՝ տեխնիկական գիտությունների թեկնածու է և աշխատում է ինստիտուտի գյուղ. մեքենաների ամբիոնի դոցենտի պաշտոնում։

Կոմունիստական պարտիան և Սովետական կառավարությունը միջոցներ չեն խնայում բարձրորակ կադրեր պատրաստելու համար։ Ուսման պրոցեսը հաջող կազմակերպելու գործում կարևոր նշանակություն ունի ուսումնա-արտադրական բազայի ստեղծումը։

Ինստիտուտը կազմակերպման ժամանակ զբաղեցնում էր մի փոքրիկ շենք 900 քառ. մետր օգտակար տարածությամբ։ Ուսումնական պրոցեսի հաջող կազմակերպման համար կարևոր նշանակություն ունեցավ ինստիտուտի ուսումնական շենքերի ավարտումը 1956 թ.։ Ուսումնական կորպուսների ընդհանուր տարածությունը այժմ կազմում է ավելի քան 11 հազար քառ. մետր։ Դա հնարավորություն տվեց կազմակերպելու նոր ամբիոններ և ստեղծելու մի շարք նոր լաբորատորիաներ։

Ինստիտուտն իր գոյության առաջին տարիներին ուներ ընդամենը 9 ամբիոն։ Ներկայումս ամբիոնների թիվը կազմում է 26։ Վերջին տարիների ընթացքում կազմակերպվել են մի շարք նոր լաբորատորիաներ՝ շարժիչների փորձարկման, տրակտորների և ավտոմոբիլների էլեկտրասարքավորման, էլեկտրատեխնիկայի, մետաղագիտության, տեխնիկական չափումների, մետաղների տեխնոլոգիայի, ջրամատա-

կարարման, սելեկցիայի և սերմնաբուծության, մարգագետնաբուծության և այլն։ Ամբիոնները, լաբորատորիաները տարեցտարի հարստանում են և կահավորվում ժամանակակից սարքավորումներով ու մեքենաներով. դա նպաստում է ինչպես ուսումնական, այնպես էլ գիտա-հետազոտական աշխատանքների մակարդակի բարձրացմանը։

Գյուղատնտեսական ինստիտուտում ուսումնական պրոցեսի կազմակերպման կենտրոնական հարցերից մեկը ուսանողների արտադրական ուսուցումն է։ Կենսագործելով կյանքի հետ ուսուցման կապը ամրապնդելու և ժողովրդական կրթության սիստեմի աշխատանքների բարելավման մասին օրենքը, ինստիտուտի մասնագիտական ամբիոնները (երկրագործության, բուսաբուծության, պտղաբանջարաբուծության, ագրոքիմիայի, այգեգործության, մելիորացիայի, գյուղ. մեքենաների և այլն) մեծ աշխատանք են տանում ուսանողների գործնական աշխատանքը կազմակերպելու ուղղությամբ։

Ուսանողների արտադրական ուսուցման աշխատանքները հաջող կազմակերպելու համար կարևոր նշանակություն ունի ինստիտուտի ուսումնա-փորձնական տնտեսության բազայի ամրապնդումը։

Ինստիտուտի ուսումնա-փորձնական տնտեսությունում մասնագիտական ամբիոնները ստեղծել են լաբորատորիաներ՝ անհրաժեշտ սարքավորումներով։

Տեսական ուսուցումը արտադրական ուսուցման և գործնական աշխատանքի հետ զուգակցելու համար այս ուսումնական տարվանից առաջին, երկրորդ և երրորդ կուրսերի ուսանողների պարապմունքների հիմնական մասը կազմակերպվում է ինստիտուտի ուսումնա-փորձնական տնտեսությունում։ Դա հնարավորություն կտա ուսումնական պարապմունքները անցկացնել անմիջականորեն դաշտում, ֆերմաներում, արհեստանոցներում՝ ուսանողների արտադրական աշխատանքների հետ միատեղ։

Ուսանողների արտադրական ուսուցման բնագավառում կարևոր նշանակություն ունի նաև բարձր կուրսերի ուսանողների արտադրական պրակտիկայի ճիշտ կազմակերպումը։ Չորրորդ և հինգերորդ կուրսերի ուսանողները իրենց արտադրական պրակտիկան անց են կացնում մեր ռեսպուբլիկայի առաջավոր կոլտնտեսություններում և սովխոզներում, իսկ գյուղատնտեսության մեքենայացման ֆակուլտետի ուսանողները պրակտիկայի են մեկնում նաև Միության ուրիշ շրջաններ։ Ուսանողների արտադրական պրակտիկան կազմակերպվում է հատուկ մշակված ծրագրերի համապատասխան և ղեկավարվում է ինստիտուտի պրոֆեսորադասախոսական կազմի կողմից։

Ուսանողների ուսուցման պրոցեսին մեծ չափով օգնում է նաև այն, որ շատ ուսանողներ դասախոսների անմիջական ղեկավարությամբ գիտա-հետազոտական աշխատանքներ են կատարում ինստիտուտի մասնագիտական ամբիոններում։ Այդպիսի ուսանողները ընդգրկված են ուսանողական գիտական ընկերության կազմում։

Ինստիտուտի ուսանողական գիտական ընկերությունը ստեղծվել է 1947 թ.։ Այդ ընկերության մեջ ընդունվում են այն ուսանողները, որոնք ցանկություն ունեն զբաղվելու գիտական աշխատանքներով։ Ներկայումս ինստիտուտի տարբեր ֆակուլտետների առաջավոր և գիտա-հետազոտական աշխատանքներ կատարող 180 ուսանողներ ընդգրկված են ուսանողական գիտական ընկերության մեջ։ Ընկերության անդամների մեծ մասը ունի հետազոտական աշխատանքի որոշակի պլան։

Ուսանողներին օգնելու տեսակետից հատկապես աչքի են ընկնում ագրոքիմիայի, երկրագործության, բուսաբուծության, այգեգործության, ընդհանուր բիմիայի, գյուղմեքենաների, ավտոտրակտորների, մետաղների տեխնոլոգիայի ամբիոնները։

Իրենց կատարած գիտա-հետազոտական աշխատանքների մասին ուսանողները պարբերաբար զեկուցում են ամբիոններին կից գործող գիտական խմբակներում, ուսանողական գիտական ընկերության ֆակուլտետային բաժանմունքներում և ինստիտուտի գիտական սեսիաներում։ Լավագույն զեկուցումները կարդացվում են նաև միջբուհական, քաղաքային, Անդրկովկասյան ռեսպուբլիկաների գյուղատնտեսական ինստիտուտների, ինչպես նաև Համամիութենական ուսանողական գիտական կոնֆերանսներում։ Շատ ուսանողներ իրենց կատարած գիտա-հետազոտական աշխատանքի համար արժանացել են խրախուսանքի։

Ուսանողների ինքնուրույն աշխատանքը կազմակերպելու գործում հատուկ դեր է պատկանում գրադարանին։ Այստեղ ևս զգալի են մեր հաջողությունները. եթե նախկինում գրադարանը զբաղեցնում էր երկու փոքր սենյակ, այժմ այժմ զբաղեցնում է ավելի քան 200 քառ. մետր տարածություն։ Ինստիտուտում գործում են ընդարձակ ընթերցարան՝ ուսանողների և գիտական կաբինետ դասախոսների համար։ Գրադարանի գրքային ֆոնդը իր մեջ ընդգրկում է ավելի քան 156 հազ. կտոր գիրք։ Միայն 1961 թ. ընթացքում գրադարանը ձեռք է բերել շուրջ 10 հազար կտոր գիրք, որից երեք

հազար հատորը ուսումնական դասագրքեր են։ Գրադարանը ստանում է 57 օրինակ թերթ, սովետական հրատարակությունների 162 անուն և արտասահմանյան երկրների՝ 45 անուն ամսագրեր։ Գրադարանի ընթերցողների թիվը կազմում է ավելի քան 2700 մարդ։

Գյուղատնտեսական ինստիտուտում հատուկ ուշադրություն է դարձվում երիտասարդության ֆիզիկական դաստիարակության գործին։ Այդ ուղղությամբ զգալի աշխատանք է կատարում ֆիզիկական դաստիարակության ամբիոնը, որը հիմնվել է 1948 թ.։ 1955 թ. շահագործման հանձնվեց ինստիտուտի հոյակապ սպորտային գանձարանը, որի շնորհիվ լայն հնարավորություններ ստեղծվեցին ուսանող երիտասարդների շրջանում սպորտային աշխատանքները մասսայական դարձնելու համար։ 1957 թ. շահագործման հանձնվեցին նաև կոմպլեքսային սպորտ հրապարակը և ամառային լողավազանը։ Այս ուսումնական տարում ամբիոնին կից գործում են սպորտային 13 սեկցիաներ, որտեղ ընդգրկված են 542 ուսանողներ։ Վերջին 10 տարվա ընթացքում ինստիտուտի ֆիզիկական դաստիարակության ամբիոնում պատրաստվել են սպորտի 4 վարպետներ, 1468 կարգային սպորտսմեններ։ Մեր ինստիտուտի սպորտսմենները միշտ էլ ակտիվ մասնակցություն են ունենում շրջանային, բաղաքային, սեսպուբլիկական, ինչպես նաև «Բուրևեստնիկ» կամավոր սպորտ ընկերության գծով կազմակերպվող մրցումներին։ Այդ մրցումների ընթացքում ինստիտուտի 17 ուսանող սպորտսմեններ արժանացել են չեմպիոնի կոչման։

Գյուղատնտեսական ինստիտուտում ամեն տարի իրենց կվալիֆիկացիան են բարձրացնում արտադրությունում աշխատող շատ ագրոնոմներ, բույսերի պաշտպանության մասնագետներ, ինժեներ-մեխանիկներ։

1961 թ. վերջին ինստիտուտին կից գյուղատնտեսական արտադրության ղեկավար կադրերի վերամսյա կուրսերը ավարտեցին 20 մարդ, որոնք բոլորն էլ Սովետական Բանակից և ռազմածովային նավատորմից զորացրված ոգիներ են։

Այժմ ինստիտուտում գործում է գյուղատնտեսական ղեկավար կադրերի (կոլտնտեսությունների նախագահների և սովխոզների դիրեկտորների) մշտական միամյա դպրոցը, որտեղ սովորում են գյուղատնտեսական արտադրության 60 մասնագետներ։

Ինստիտուտում սովորող ուսանողների թվի աճին զուգընթաց աճել է ինստիտուտի դասախոսների թիվը։ ՍՍՀ կազմակերպվելու առաջին տարիներին ինստիտուտում աշխատում էին միայն 48 դասախոս, ապա ներկայումս աշխատում են 125 հոգի, որից 7 հոգի դոկտոր-պրոֆեսորներ են, իսկ 65 հոգի՝ գիտության թեկնածուներ և դոցենտներ։ Ուշագրավ է, որ դասախոսներից 44-ը ինստիտուտն ավարտած սաներն են։ Ուսումնական պրոցեսին մեծ օգնություն է ցույց տալիս ուսումնա-օժանդակ կազմը, որտեղ ընդգրկված են 74 մարդ։

Գիտա-մանկավարժական գործունեության ասպարեզում ունեցած ծառայությունների և աչքի ընկնող հասարակական-քաղաքական գործունեության համար ինստիտուտի դասախոսներից 4-ը արժանացել են գիտության վաստակավոր գործչի կոչման, 61 դասախոսներ պարգևատրվել են Սովետական Միության շքանշաններով և մեդալներով։

Հայկական Գյուղատնտեսական ինստիտուտը միաժամանակ սեսպուբլիկայում գյուղատնտեսական գիտության զարգացման և գիտա-հետազոտական աշխատանքի խոշոր օջախներից մեկն է։

Ինստիտուտի պրոֆեսորա-դասախոսական կոլեկտիվը այժմ զբաղվում է 7 պրոբլեմների մշակումով, որոնք ընդգրկում են գյուղատնտեսության զարգացման հարցերին նվիրված 54 թեմաներ։

Ինստիտուտի գիտնականների կոլեկտիվը աշխատում է գյուղատնտեսության համար կարևորագույն հետևյալ պրոբլեմների շուրջը՝ գյուղատնտեսական կուլտուրաների բերքատվության բարձրացման միջոցառումների ուսումնասիրությունը, նոր հողերի յուրացումը, կերային կուլտուրաների ուսումնասիրությունը, գյուղատնտեսական կուլտուրաների նոր արժեքավոր սորտերի ստացումը, նոր հերբիցիդների սին թեզը և մոլախոտերի դեմ քիմիական պայքարի միջոցների մշակումը, գյուղատնտեսական մեքենաների կոնստրուկցիաների լավացումը և օգտագործման գործակցի բարձրացումը, բարբարոտ հողերի յուրացման մեթոդաբանությունը և այլն։ Ինստիտուտի գիտնականները մշակել են գյուղատնտեսության տարբեր ճյուղերին վերաբերող մի շարք ակտուալ հարցեր, որոնցից շատերը լայն ճանաչում ու կիրառում են ստացել գյուղատնտեսական արտադրության մեջ։ Նշենք այս բնագավառի հիմնական նվաճումները.

Արժեքավոր աշխատանքներ են կատարել ընդհանուր երկրագործության ամբիոնի աշխատակիցները, ամբիոնի վարիչ Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի իսկական անդամ, պրոֆեսոր Գ. Խ. Աղաջանյանի ղեկավարությամբ։ Ամբիոնը հատկապես մեծ գործ է կատարել Արարատյան դաշտավայրում աղա-

կալած հողերի և Սևանա լճի ջրերից ազատված գրունտների յուրացման և օգտագործման ասպարեզում, ուսումնասիրվել են մոլախոտերը և նրանց դեմ պայքարելու միջոցառումները։ Ամբիոնի աշխատողները զբաղվել են նաև գյուղատնտեսական մի շարք կուլտուրաների ագրոտեխնիկայի հարցով։

Այդ ամբիոնի երկարամյա աշխատակից դոցենտ Ա. Գ. Ներսիսյանը օդերևութաբանության բնագավառում ռեսպուբլիկայի ամենաճանաչված մասնագետներից մեկն է։ Նա ծավալուն ուսումնասիրություններ է կատարել Հայաստանի կլիմայի վերաբերյալ։

Բուսաբուծության ամբիոնը հիմնադրել և երկար տարիներ գլխավորել է ականավոր գիտնական, Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի ակադեմիկոս, պրոֆեսոր Մ. Գ. Թումանյանը։ Հայաստանում Սովետական իշխանություն հաստատվելու առաջին տարիներից մինչև իր մահը պրոֆեսոր Մ. Գ. Թումանյանը զբաղվել է Հայաստանի կուլտուրական բույսերի ուսումնասիրության հարցերով։ Հատկապես մեծ արժեք են ներկայացնում նրա ուսումնասիրությունները Հայաստանի ցորենների բիոցենոզի և բույսերի նպատակասլաց ձևագոյացման հարցերի ասպարեզում։ Այդ ամբիոնի դոցենտ Բ. Մ. Գարասեֆերյանը ստացել է աշնանացան ցորենի «Արմյանկա» սելեկցիոն բարձր բերքատու սորտը, որն այժմ շրջանացված է ռեսպուբլիկայի մի շարք շրջաններում։

Ներկայումս բուսաբուծության ամբիոնի աշխատակիցները ամբիոնի վարիչ պրոֆեսոր Ա. Ա. Մաթևոսյանի ղեկավարությամբ զբաղվում են դաշտային կուլտուրաների և առաջին հերթին՝ եգիպտացորենի, շաքարի ճակնդեղի, ծխախոտի, հատիկա-ընդեղենային կուլտուրաների բերքատվության բարձրացման միջոցառումների ուսումնասիրությամբ և նոր սորտեր ստեղծելու հարցերով։

Հայաստանի հողերի ուսումնասիրության և ռեսպուբլիկայի հողային քարտեզը կազմելու բնագավառում մեծ աշխատանք է կատարել հողագիտության ամբիոնի վարիչ պրոֆեսոր Խ. Պ. Միրիմանյանը։ Հողագիտության ամբիոնի կոլեկտիվը այժմ աշխատում է ռեսպուբլիկայի ճահճային հողերի ուսումնասիրման և յուրացման հարցերի վրա։

Ինստիտուտի ամենավաղ կազմակերպված ամբիոններից մեկն էլ ագրոքիմիայի ամբիոնն է։ Շուրջ 25 տարի է, ինչ այդ ամբիոնը ղեկավարում է պրոֆ. Ս. Մ. Մովսիսյանը, որը մեծ աշխատանք է կատարել ագրոքիմիական նոր մեթոդներ մշակելու, գյուղատնտեսական կուլտուրաների պարարտացման հարցերը ուսումնասիրելու գործում։

Բուսաբանության, բույսերի ֆիզիոլոգիայի և միկրոբիոլոգիայի ամբիոնը ղեկավարում է Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի թղթակից անդամ, պրոֆեսոր Հ. Կ. Փանոսյանը, որը չափազանց արժեքավոր հետազոտություններ է կատարել հողի միկրոբիոլոգիական հարցերի ուսումնասիրման բնագավառում։ Այդ ամբիոնում շատ արժեքավոր աշխատանքներ է կատարել բույսերի ֆիզիոլոգ, բիոլոգիական գիտությունների դոկտոր Ա. Աղինյանը։ Նա ուսումնասիրել է ցորենի սաղմնային հատիկի յարովիզացիայի ստադիան անցնելու օրինաչափությունները, օրիգինալ փաստերով հաստատել բույսերի զարգացման ստադիականության տեսությունը, մշակել բույսերի նպատակադիր փոփոխման նոր եղանակ։

Գյուղատնտեսական մեքենաների ամբիոնի կազմակերպիչը և ղեկավարն է պրոֆեսոր Ս. Ս. Սահակյանը։ Նա արժեքավոր աշխատանք է կատարել դյուզմեքենաների բնթացքային օրգանների և հենման մակերեսների ու հողի փոխազդեցության հարցերի ուսումնասիրման բնագավառում։ Այժմ այդ ամբիոնի աշխատակիցները պրոֆ. Ս. Սահակյանի ղեկավարությամբ զբաղվում են լեռնային ռելյեֆի պայմաններում աշխատող մեքենաների տեսության ու նրանց կառուցվածքի, ռեսպուբլիկայի բարբարոտ հողերի յուրացման համար խիստ անհրաժեշտ բարձրավաք մեքենայի ստեղծման և շահագործման հարցերի ուսումնասիրման գծով։

Գյուղատնտեսության էկոնոմիկայի ամբիոնը ունի երկու տարվա պատմություն, այդ ժամանակամիջոցում ամբիոնը պրոֆ. Ա. Հ. Մարուխյանի ղեկավարությամբ որոշ աշխատանք է կատարել ռեսպուբլիկայի կոլտնտեսությունների և սովխոզների զարգացման էկոնոմիկան ուսումնասիրելու գծով։ Գյուղատնտեսության մեջ աշխատանքի կազմակերպման հարցերում գնահատելի աշխատանք է կատարում սոցիալիստական գյուղատնտեսական ձեռնարկությունների կազմակերպման ամբիոնը (վարիչ դոցենտ Մ. Ա. Գևորգյան)։

Պտղաբուծության և բանջարաբուծության ամբիոնը նույնպես ամենավաղ կազմակերպված ամբիոններից մեկն է։ Ամբիոնի վարիչ դոցենտ Ա. Ե. Մարգարյանը մեծ աշխատանք է կատարել Հայաստանի խնձորենիները ուսումնասիրելու ասպարեզում։ Նրա կողմից հայտնաբերված տեղական սորտերից 6-ը առաջարկված են առտադրության մեջ ներդնելու համար։ Ամբիոնի դոցենտ Ս. Ս. Խաչատրյանը ուսումնասիրել է բանջարանոցային կուլտուրաների մշակության մի շարք հարցեր, նա ստեղծել է սեխի մի քանի նոր սորտեր, որոնք ներդրվել

են արտադրության մեջ։ Այդ ամբիոնի կոլեկտիվը այժմ զբաղվում է պտղատու և բանջարանոցային կուլտուրաների բերքատվության բարձրացման հարցերի ուսումնասիրությամբ։

Բույսերի պաշտպանության ամբիոնը մեծ աշխատանք է կատարել գյուղատնտեսական բույսերի ամենավտանգավոր վնասատուների և հիվանդությունների ուսումնասիրման և նրանց դեմ պայքարի միջոցներ մշակելու ասպարեզում։ Արժեքավոր աշխատանք է համարվում ամբիոնի վարիչ դոցենտ Հ. Գ. Թումանյանի կողմից գյուղատնտեսական բույսերի լվիճների ուսումնասիրությունը և նրանց դեմ պայքարի եղանակների մշակումը։

Արժեքավոր գիտական աշխատանք է կատարում ընդհանուր բիմիայի ամբիոնի վարիչ դոցենտ Վ. Վ. Դովլաթյանը։ Մոլախոտերի դեմ պայքարելու համար սենսիբիլիկայի արդյունաքերության մնացուկներից նրա սինթեզած «կրոտիլին» հերբիցիդը լայն ճանաչում է ստացել Սովետական Միությունում։

Գյուղատնտեսության մելիորացիայի ամբիոնը (վարիչ դոցենտ Ռ. Մելիքյան) մեծ աշխատանք է կատարել գյուղատնտեսական կուլտուրաների ոռոգման ռեժիմի ու տեխնիկայի, լեռնային արոտավայրերի ջրարբիացման և անասնապահական ֆերմաների ջրամատակարարման հարցերի ուսումնասիրության բնագավառում։

Գիտական ու արտադրական մեծ արժեք ունեցող հարցեր են մշակում նաև գյուղմեքենաների նորոգման, մեքենա-տրակտորային պարկի շահագործման, տրակտորների և ավտոմեքենաների, այդեկինեկործության, անասնարուծության ամբիոնները։ Տեսական նշանակություն ունեցող և ժողովրդական տնտեսության տարբեր բնագավառների համար արժեքավոր գիտական թեմաների հետազոտությամբ են զբաղվում մետաղների տեխնոլոգիայի, գրաֆիկայի ու մեքենաների մասերի, բարձրագույն մաթեմատիկայի, ֆիզիկայի ամբիոնները։

Գյուղատնտեսական կադրերը մարքսիզմ-լենինիզմի տեսական հիմունքներով զինելու, բաղաքական-դաստիարակչական աշխատանքների բնագավառում հսկայական աշխատանք են կատարում մարքսիզմ-լենինիզմի ամբիոնի (վարիչ դոցենտ Ա. Մ. Պետրոսյան) և քաղաքատնտեսության ամբիոնի (վարիչ դոցենտ Պ. Տ. Ոսկերչյան) դասախոսները։ Հասարակական գիտությունների ամբիոնների աշխատակիցները մանկավարժական ու բաղ-դաստիարակչական աշխատանքից բացի կատարում են գիտական ուշագրավ աշխատանքներ։

Ուրախալի է, որ ինստիտուտի բազմամյա փորձ ունեցող և ճանաչված գիտնականների հետ միասին տեսական ու արտադրական կարևոր նշանակություն ունեցող գիտական հարցերի ուսումնասիրությամբ զբաղվում են նաև երիտասարդ գիտական աշխատողները։

Ինստիտուտի պրոֆեսորա-դասախոսական կազմի կողմից կատարված գիտա-հետազոտական աշխատանքների արդյունքները ընդհանրացվել են ինստիտուտի գիտական աշխատությունների ժողովածուի 12 հատորներում, շուրջ հազ.ի չափող ամսագրային հոդվածներում, մի քանի հարյուրի հասնող գիտա-հանրամատչելի և գիտական բրոշյուրներում ու գրքերում։ Ինստիտուտի բազմամյա փորձ ունեցող դասախոսները ուսանողների համար գրել են, կամ հայերեն լեզվով թարգմանել ու խմբագրել են մի շարք դասագրքեր և ուսումնական ձեռնարկներ (հողագիտություն, միջատաբանություն, գյուղատնտեսական մելիորացիա, երկրագործություն, բուսաբուծություն, մետաղների տեխնոլոգիա, ընդհանուր բիմիա, գյուղմեքենաներ և այլն)։

Գյուղատնտեսական ինստիտուտում զգալի աշխատանք է տարվում նաև մանկավարժական ու գիտական կադրերի պատրաստման գծով։ Այն գլխավորապես կատարվում է ասպիրանտուրայի միջոցով, որը հիմնվել է 1938 թ.։ Սակայն Հայրենական Մեծ պատերազմի պատճառով ասպիրանտների ուսուցումը ինստիտուտում դադարեցվել էր և այն վերսկսվեց 1950 թ.։ Այժմ ասպիրանտուրայի միջոցով գիտա-մանկավարժական կադրեր են պատրաստվում 13 ամբիոնների գծով՝ երկրագործության, հողագիտության, բուսաբուծության, ագրոքիմիայի, պտղաբուծության ու բանջարաբուծության, խաղողագործության, գյուղատնտեսության էկոնոմիկայի, սոցիալիստական գյուղատնտեսական ձեռնարկությունների արտադրության կազմակերպման, ավտոմոբիլների ու տրակտորների, գյուղատնտեսական մեքենաների, մեքենա-տրակտորային պարկի շահագործման, գյուղատնտեսական մեքենաների ու ավտոմոբիլների նորոգման, ավտոմոբիլների արտադրության տեխնոլոգիայի մասնագիտություններով։ Ներկայումս ինստիտուտի ասպիրանտուրայում սովորում են 29 հոգի։ Ուշագրավ է, որ գյուղատնտեսական արտադրության մի շարք աշխատողներ ասպիրանտուրան անցնում են առանց արտադրությունից կտրվելու։ Ասպիրանտների ուսուցումը ղեկավարում են ինստիտուտի անվանի գիտնականները։ Ասպիրանտուրան ավարտելուց և հաջողությամբ դիսերտացիա պաշտպանելուց հետո ինստիտուտի սաներից շատերը այժմ աշխատում են ինստիտուտում որպես դասախոսներ, ամբիոնների վարիչներ, դեկաններ։

1948 թ. ինստիտուտին վերապահվեց գյուղատնտեսական գիտությունների թեկնածուի գիտական աստիճան, իսկ 1955 թ.՝ նաև տեխնիկական գիտությունների թեկնածուի գիտական աստիճան շնորհելու իրավունքը։ Անցած այդ ժամանակաշրջանում ինստիտուտում դիսերտացիաներ են պաշտպանել 44 մարդ։ Մեր ինստիտուտում դիսերտացիաների պաշտպանությամբ հանդես են եկել նաև եղբայրական Ադրբեջանի, Ստավրոպոլի երկրամասի, Բաշկիրական Ավտոնոմ Ռեսպուբլիկայի գիտնականները։

Ինստիտուտի շատ դասախոսներ իրենց գիտական կվալիֆիկացիան բարձրացրել և դիսերտացիաներ են պաշտպանել առանց ասպիրանտուրայում սովորելու։ 1948 թ. մինչև այժմ ինստիտուտի աշխատակիցներից 52 հոգի ստացել են գիտության թեկնածուի և 4 հոգի գիտության դոկտորի աստիճան։

Ինստիտուտում ուսումնական, գիտա-հետազոտական և քաղաքական-դաստիարակչական աշխատանքները տարվում են պարտիական բյուրոյի (քարտուղար Գ. Դավթյան) ղեկավարությամբ։ Պարտիական կազմակերպությունը հաճախակի կազմակերպում է տեսական կոնֆերանսներ, դասախոսություններ ու զեկուցումներ ՍՄԿՊ XXII համագումարի պատմական որոշումների, մեր երկրի ժողովրդական տնտեսության զարգացման խնդիրների մասին։ Մեծ ուշադրություն է դարձվում ուսանողության մեջ տարվող ագիտ-մասսայական աշխատանքներին։ Այս խնդիրների հաջող կատարմանը օգնում է ինստիտուտի «Գյուղատնտես» բազմատիրաժ թերթը։

Գյուղատնտեսության բնագավառի աշխատողների առաջ նոր պատասխանատու խնդիրներ դրեց ՍՄԿՊ Կենտկոմի մարտյան պլենումը։ Պլենումում բազմակողմանիորեն քննարկվեցին գյուղատնտեսության արտադրանքի հետագա վերելքի, ժողովրդի համար սննդամթերքի լիառատություն ստեղծելու, գյուղատնտեսության ղեկավարման հետագա կատարելագործման, գյուղատնտեսությանը նյութա-տեխնիկական օգնություն ցույց տալու հարցերը և կոնկրետ խնդիրներ դրվեցին գյուղատնտեսության աշխատողների, այդ թվում նաև գյուղատնտեսության մասնագետների առաջ։ Պլենումում սուր քննադատության ենթարկվեց Վիլյամսի երկրագործության սիստեմի սնանկությունը։ Պարտիան հատուկ նշանակություն է տալիս մասնագետների պատրաստմանը, գիտա-հետազոտական աշխատանքների մակարդակի բարձրացմանը, արտադրության մեջ գիտության ու առաջավոր փորձի ներդրմանը։

Ելնելով ՍՄԿՊ XXII համագումարի և ՍՄԿՊ Կենտկոմի մարտյան պլենումի որոշումներից, Գյուղատնտեսական ինստիտուտի ամբիոնները վերանայել են ուսումնական ծրագրերը, դասախոսությունների ընթացքում հատուկ ուշադրություն է դարձվում գիտության ու առաջավոր փորձի նվաճումների տարածմանը, երկրագործության ինտենսիվ սիստեմների առավելությունների լուսաբանմանը։ Վերանայվել են գիտա-հետազոտական աշխատանքների թեմատիկ պլանները, հատուկ ուշադրություն է դարձվում եգիպտացորենի, կերի նպատակով շաքարի ճակնդեղի, հատիկա-ընդեղեն կուլտուրաների մշակության, նոր հողերի յուրացման, գյուղատնտեսության աշխատատար պրոցեսների մեքենայացման հարցերի ուսումնասիրմանը։

Հ. ՄԱՐՋԱՆՅԱՆ

Գյուղատնտեսական ինստիտուտի ռեկտոր

АРМЯНСКАЯ ХУДОЖЕСТВЕННАЯ КИНЕМАТОГРАФИЯ

(Краткий обзор)

Армянская художественная кинематография — детище Советской власти. До установления Советской власти в Армении не существовало армянской кинематографии, хотя и были отдельные попытки создания документальных и художественных фильмов, как и случаи участия армянских артистов в русских фильмах.

Первая попытка создать армянский художественный фильм относится к 1913 г., когда артистка Сатеник Адамян обратилась к Микаелю Манвеляну с предложением об экранизации его пьесы «Сказка». Армянская артистка в письме набросала либретто будущего фильма, сообщила о готовности Ованеса Зарифяна сниматься в фильме.

В 1915 г. в Екатеринодаре акционерным обществом «Минерва» был снят двухсерийный художественный фильм «Трагедия Турецкой Армении». Фильм этот не сохра-